

խնայող ունի նաև գութանի բոլոր մասերը և անկախ կերպով 2-3 լուծ եղ լծուած գնում է առաջին գութանի յետեից նորա բաց արած ախոսի միջով, որով և աւելի խորացնում է ախոսը և, առանց դուրս ձգելու հողը մշակում է այդ ախոսի ներքին շերտը. կամ նոյն գութանի անցկացրած ախոսից թխակնեներով դուրս են ձգում հող առաջին գութանի շրջած առի վերայ:

(Կը շարունակուի)

Գ. Դ.



ԱՅԼԵՒԱՅԼՔ

ՌՆԶՊԵՍ ՊԸՀՊԸՆԹԻՍԻԸ ԺՈՂԻՎ ՀԻՒՆԵԳՈՒԹԻՒՆԻՑ

Հին ժամանակներում ծաղիկը շատ տարածուած հիւանդութիւն էր շատ էլ ժողովուրդ էր կոտորում ու այլանդակում: Դեռ սրանից մի դար առաջ 15 հոգուց մէկը հազիւ թէ անվտանգ ազատուէր ծաղիկից: Որտեղ տասը հոգի ծաղկից բռնուէին, դրանցից մի երեքը մահի ծարակ կը լինէին: Գնացածներից որը կուրանում էր, որը խլանում էր և հազիւ թէ մէկը շնչոտ չըմնար: Եւ մարդիկ չէին խմանում ինչպէս պաշտպանուեն այդ սարսափելի ցաւից, մինչև որ մի անգլիացի բժիշկ—սրա անունն էր Զէններ—անցեալ դարում վերջապէս հնար գտաւ այս ցաւի դէմ:

Վաղուց յայտնի է թէ՛ ծաղկացաւը միայն մարդկանց չէ բռնում, այլ երեւում է և տաւարի վրայ—ձիանների ոչխարների ու կովերի վրայ: Զիւն ոտքերի վրայ է դուրս աւելի ծաղիկը, ոչխարի բոլոր մարմնի վրայ, իսկ կովերի միայն ծծերի կամ պտուկների վրայ: Վաղուց էլ նկատուած էր, որ երբ զեղջկուհին կթում էր ծաղկով բռնուած կովը, կթողի մատների վրայ դուրս էին դալի իսկ այն տեսակ ծաղկի բշտիկներ, որպէս էին և կովի ծծերի վերայ: Բայց այդ դէպքում կին—արմատը երբեք ծանր հիւանդութիւն չէր քաշում, այլ թեթեւ ու անվտանգ:

Դոկտոր Զէնները անգլիական մի գիւղի բժիշկ էր: Ապրելով գիւղացւոց հետ նա ականատես էր ժողովրդի տանջանքներին ծաղկի երեսից, ուստի մտածում է միշտ մի կերպով այդ սարսափելի չարիքի առաջն առնել: Սրա համար ամեն տեսակ տեղեկութիւններ հաւաքում էր նոյն իսկ գիւղացիներին հարց ու փորձ անելով: Այս անդեկութիւններից նա իմացաւ հետեւեալը: Երբ կով կթող կնկայ մատներին դուրս աւել հիւանդ կովից փոխուած ծաղիկը, այլ ևս այդ կինարմատին չի գիւղիլ մարդկային վտանգաւոր ծաղիկը, թէկուզ նրա բոլոր գերգաստանը վարակուած լինի իսկական և ծանր ծաղկով: Այս բանը Զէնները վճռեց փորձով հաստատել 1796 թուի մայիսի 14-ին: Մի գիւղացու ութը տարեկան տղայի (Փիրս անունով) թեկերի կաշու վրայ Զէնները նշտարով երկու բարակ և փոքրիկ ձեղք արեց և նրանց վրայ քսեց մի—մի կաթիլ այն թարախից, որ առած էր կովածաղկով վարակուած մի կովապահ կինարմատի բշտիկներից: Ամեն բան այնպէս եղաւ, ինչպէս որ սպասում էր Զէնները. աղայի թեկերին մի քանի օրից յետոյ դուրս աուին կովի ծաղկի նման բշտիկներ, այս միջոցին նա ունեցաւ թեթեւ տաքութիւն, մի քանի օր էլ անցած՝ բշտիկները քիչ-քիչ չորացան, տղան բոլորովին առողջացաւ. բայց մնաց դեռ իմանալու ամենագլխաւորը, թէ տղան արդեօք ապահովուած էր իսկական ծաղկի վարակումից: Այս հարցը վճռելու համար Զէնները դորձ դրեց մի սարսափելի փորձ: Այն է՝ վերցրեց նշտարով իսկական մարդկային վտանգաւոր ծաղկի հիւթը պատուաստեց նոյն տղային մի երկու ամիս չանցած առաջի փորձից յետոյ: Սպասելով թէ մի գուցէ խեղճ-տղային բռնէ իւր ձեռքով տուած վտանգաւոր ծաղկի թոյնը Զէնները երեք հոգեմաշ և անտանելի օր ու գիշեր անցուց... բայց փառք Ասածու, տղան բոլորովին անվնաս մնաց և ոչ մի հիւանդութիւն չունեցաւ այս սոսկալի փորձից, որովհետեւ առաջի փորձով իսկական ծաղկի վարակումից նա ապահովուած էր:

Այսպէս կատարուեց գիտութեան ամենարարկարար գիւտերից մէկը, թէ և նա մեծ տանջանքներ պատճառեց գիւտն անողին...

Այնուհետև Ջէն էրը հեռեկալ կերպով մտածեց: Կովի ծաղկով վարակուած մարդը երբէք չի մնասուուած: Բայց միևնոյն ժամանակ զբանով նա ազատուում է աւելի փառաշատ և սարսափելի մարդկային ծաղիկց: Ուրեմն՝ լաւ չի լինիլ որ բոլոր մանուկներին պատուաստենք կովի ծաղիկը: որ բոլորն էլ ազատուեն իսկական ծաղկի չարիքից: Մտածեց և կատարեց: Երբ մի անգամ Ջէնէրի ապրած գիւղում ծաղիկը նորից սկսեց սաստկանալ և կոտորել ժողովրդին: Ծա հաւաքեց կովի ծաղկի բշտիկները րաւականին նիւթ (աւիշ) և պատուաստեց բոլոր առողջ մանուկներին: Այսինքն՝ ինչպէս առաջի փորձում առողջ երեխայի թեւի կաշին քերծում էր նշտարով կամ փոքր ինչ ձեղքում և վրան քսում էր կովի ծաղկի հիւթը: մի քանի օրից յետոյ՝ բոլոր երեխաների թեւերի վրայ դուրս եկան իսկ և իսկ կովի ծաղկի նման բշտիկներ: մի երկու շաբաթից էլ բըշտիկները փչկուեցին՝ չորացան: Այժմ արի ու տես, որ այդ երեխաներից ոչ մէկին դարձեալ չընենց այն ժամանակ գիւղում տարածուած իսկական ծաղիկը...

Ջէնէրի ուրախութեանը էլ չափ չըկար: որ վերջապէս զանուեցաւ հնար պաշտպանել ամբողջ ժողովուրդը ծաղկի աւերումներից:

Նա զրեց այդ մասին Անգլիայի ու օտարերկրեաց ուրիշ բժիշկներին: Սրանք էլ ամեն տեղ սկսեցին նոյն փորձերը կատարել և դուրս էր գալի ամեն տեղ միևնոյն բանը: ում որ պատուաստում էին կովի ծաղիկը ինչպէս Ջէնէրը սովորացրել էր: նրան այլևս իսկական ծաղիկը չէր գիպում:

Այժմ եւրոպական պետութիւններում հազիւ կը պատահի երեխայ որ վաղօրօք կովի կամ հորթի ծաղկով պատուաստուած չը լինի և այդ պատճառով իսկական ծաղկից մեռնողների թիւը այդ տեղերում չառ քչացել է:

Գերմանիայում 24 տարի սրանից առաջ օրէնք հրատարակուեց: որով բոլոր ծնողները պարտաւորուեցան իւրաքանչիւր մանկան պատուաստել ծաղիկը ոչ թէ մի անգամ այլ և երկրորդ անգամ 10 տարեկան հասակում: Երկրորդ անգամ պատուաստելու պատճառն այն է, որ փորձերից երեւաց, որ ամեն մի պա-

տուաստումը երեխային պաշտպանում է իսկական ծաղկի հիւանդութիւնից միմիայն 8 կամ 10 տարի: Այս կրկնապատուաստի ընդունելու ժամանակից սկսած՝ իսկական ծաղիկը Գերմանիայում տարե ցտարի պակասելով հիմի էլ բոլորովին անհետացել է: այնպէս որ այդ երկրում մարդիկ այժմ իսկական ծաղկի հիւանդութեան ինչ տեսակ լինելն էլ չեն իմանում:

Մեզանում դժբախտաբար այդպէս չէ: մեր գիւղերում ու փոքր քաղաքներում քանի քանի գերդաստաններ թողնում են իրանց երեխայոց առանց պատուաստի: կան մեզանում դեռ շատ պատաններ և տատեր: որ ծաղկի դէմ միջոցներ գործածելը և ծաղիկ կտրելը մեղք են համարում: Մարդ հարցնէ զրանց թէ՛ ախար ի՞նչ մեղք բան է, եթէ մարդս իր զաւակների մօտին հոգ տանի առաջուց: որ նրանք չկուրանան կամ չայլանդակուեն: Ապա տեսէք, թէ մի գիւղում ուր ժողովուրդը պատուաստից փախչում է, իսկական ծաղիկը ի՞նչ սարսափ է ձգում չորս կողմը: որի տանտէրը կուրացաւ: որոնց ստընտու մայրը ծաղկից էն աշխարհը գնաց: այս տանը բոլոր երեխայքը կոտորուեցին: այն տանը մարդու տալու աղջկայ երեսը այլանդակուեց... որ մէկը պատմեմ լացն ու կոծը մինչև երկինք է հասնում: Ո՛վ է մեղաւորը: մարդիկ իրանք: որ իրանց չուզենան օգնել: Աստուած ի՞նչ անէ...

Ահա այդ տեսակ անհոգ և սնոտիազաշտ մարդկանց երեսից մեզանում ծաղիկը ամեն տարի ման է գալի գիւղից գիւղ: քաղաքից քաղաք և անհամար զոհեր է տանում և դեռ ոչքան էլ կոյրեր է թողնում այս աշխարհում թափառելու իրր կենդանի օրինակներ: Ծնողական անհոգութեան կարող է պատահել: որ պատուաստածներն էլ ծաղկի տարածման ժամանակ հիւանդանան իսկական ծաղկով: սակայն փորձը ցոյց է տալի որ զրանց հիւանդութիւնը թեթեւ է լինում և այդպիսիներին ծաղկից շատ հազիւ է պատահում մահ կամ կուրութիւն: այդ էլ նրանց կպատահի: որ մի անգամ միայն պատուաստուած են: միայն շատ փոքր հասակում: իսկ կրկին անգամ՝ պատուաստածները թէ բռնուին էլ

Ծաղկից, միայն թեթեւ չեղտութիւնով կատարուին նրա ծանկից:

Այս ամէնը խմանալուց յետոյ ծնողները անշուշտ պարտական են պատուաստել իրանց մանուկին: Տէնց որ սա չորս կամ հինգ ամսական դառնայ: Ութը կամ տասը տարեկան հասակում՝ նոյն երեխային պէտք է անպատճառ նորից ծաղիկը կտրել: Իսկ երբ քաղաքի մի թաղում կամ մի գիւղում ծաղիկը սաստիկ տարածուի այդ դէպքում պէտք է պատուաստուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր թէ՛ երիտասարդ և թէ՛ մանուկ, այդպէս որ անէք շատ շուտով պատուհասը ձեր գիւղից կկիրանայ և կկորչի:

Ոչինչ փնաս պատուաստումից չի պատահի եթէ զրա համար զիմէք բժշկին կամ ֆելդշերին, որոնց բժշկական վարչութիւնը տալիս է հորթի կամ կովի ծաղկի հիւթ և զրկում է զիւրերը պատուաստի համար: Դէհ, էլ ուր էք թաքցնում ձեր երեխայոց զրանցից, էլ ի՞նչ էք փախչում պատուաստից: Ուզում էք ձեր տպագայ սերնդի անէծքին արժանանալ ձեր անհոգութեան կամ սնտուկապաշտութեան համար.....

Հիմի լսեցէք թէ որ ժամանակներում պէտք է երեխի ծաղիկը կտրել եւ ինչ իմաստարութիւն է հարկաւոր այդ դէպքում:

Վերը ասացինք թէ պէտք է պատուաստել ծծկեր երեխային, երբ սա չորս կամ հինգ ամսական դառնայ: Ի հարկ է, երբ որ մանուկը թոյլ է կամ հիւանդ է, կարելի է յետաձգել պատուաստը մինչև նրա առողջանալը: Սակայն երբ գիւղում յանկարծ սկսվում է տարածուել ծաղիկը, այդ դէպքում էլ հարկ չըկայ սպասելու 4—5 ամիսը լրանալուն, այլ՝ անմիջապէս հարկաւոր է պատուաստել թէ՛ կուղ 3—4 շաբաթուայ ծծկերներին:

Որտեղ բժիշկ կայ, պէտք է հիւանդ երեխային նրան ցոյց տալ. բժիշկը կարող է որոշել՝ որ հիւանդին կարելի է պատուաստել ծաղիկը, որին չէ, որովհետեւ ամեն տկարութիւն պատուաստումից հօ՛ չի վատանում:

Սովորաբար ծաղիկը կտրում են դարնանք կամ աշնանը, բայց երբ գիւղում երևայ ծաղկի համաճարակը, պէտք է պատուաստել առողջ մանուկներին տարուայ որ

եղանակին էլ պատահի Շատ մայրեր վախենում են ձմեռ ժամանակ պատուաստել իրենց երեխային: Դա աւելորդ վախ է: Անշուշտ պէտք է զգուշանալ երեխային մրսեցնելուց և զրա համար բուսական է, որ ծծկերին պատուաստումից յետոյ երկու շաբաթ դուրս չը բերէք սաստիկ ցրտերին, իսկ տաք ժամանակ հարկաւոր է դուրս բերել ամեն օր: Պատուաստումից առաջ պէտք է երեխային լողացնել և մաքուր շապիկ հագցնել, լայն թեւերով Պատուաստումի չորրորդ օրից, երբ կերևան ծաղկի բշտիկները, մինչև տասն և չորս օր, երբ նրանք կշորանան, այլ ևս չպէտք է լողացնել երեխային: Այդ միջոցում հարկաւոր է երեխայի միայն երեսը և կեղտոտ տեղերը լուանալ, շուտ—շուտ փոխել վրայի շապիկը և տա՛հասարակ փոխնորդը:

Պատուաստումի ութերորդ կամ տասներորդ օրը մանուկը փոքր ինչ սկսում է ջերմել, լաւ չի քնում, անհանգիստ է: Փորձառու մայրերը գիտենալով, որ դա պատուաստի սովորական ընթացքն է, իրանք էլ ի դուր չեն շփոթում: Երբ ծաղկի բշտիկները սկսում են լցուել, նրանց շուրջը բուսական կարմրում է:

Սակայն կպատահի երբեմն, որ այդ կարմրութիւնը տարածուում է բոլոր ուսի վրայ և մանուկը չափազանց անհանգիստ է դառնում, անգաղաք լաց է լինում, որովհետեւ կարմրած թեւիկը այրւում է և քոր է գալի: Պէտք է այդպիսի դէպքում զիմեւ բժշկի, եթէ սա դանուի, եթէ ոչ՝ պէտք է դոնեա կարմրած տեղին մաքուր կարագ քսելով՝ փոքր ինչ հանգարտեցնել այդ այրոցը և քորը:

Երբեմնապէս ծաղկի բշտիկները իւր ժամանակին չեն չորանում, այլ ջրջրտում են, երբ երեխային մաքուր չգաճեն, կեղտոտ շորերը չըփոխեն: Շատ անգամ էլ երեխան առանց հսկողութեան մնալով, անհանգստանալուց իւր մատիկներով պոճկում է թեւի բշտիկները և նրանց տեղը խոց դարձնում, որ դարձեալ բժշկի հոգացողութեան է կարօտ:

Այս էլ կպատահի, որ պատուաստում են երեխային կովի ծաղիկը, լաւ բռնում է պատուաստը թեւին, մէկ էլ տեսար երեխայի փորի և ոտիկների վրայ էլ երեւցան մի քա-

նի բշտիկները Մայրերը շատ անգամ այդ րանից մեծ վախ են զգում թէ՛ մի՞ գուցէ իսկական վտանգաւոր ծաղիկ պատուաստեցին խեղճ երեխային։ Սակայն հարկ՝ չկայ վախենալու։ Երովհետեւ կովի ծաղիկ պատուաստից մարդկային իսկական ծաղիկ չի դուրս տայ մարմնի միւս մասերում։ այլ նոյն կովի ծաղիկը կլինի որ յամենայն դէպս անվնաս է։

Մայրը շուտով ինքն էլ համոզուած է, որ մարմնի վրայ դուրս տուածից ոչինչ վտանգ չաւելացաւ երեխային։ փորի վրայի բշտիկները շատ շուտով չորանում են և աւելի շուտ անհետանում։ քան թե ի սկզբնական բշտիկը։ Ուրեմն առ հասարակ՝ կովի ծաղիկ կանոնաւոր պատուաստումից քնաս չկայ *։

Թարգմ. Բժշկապետ Ս. Բարայեանց.



ՄԱՆՐԱԼՈՒՐԳ

3000 հազարամեծ մի ժամուս կամ մի հազարամեծ մի վայրկեանում.— Այսպիսի աներեւակայելի արագութեան միջոց ձեռք բերել գուցէ անհնարին կհամարուէր տարիներ առաջ, թէկուզ հէնց տարեցտարի կատարելագործուող թնդանօթմաճգութեան արհեստի մէջ, սակայն կասկածների տեղիք չի մնում՝ այդքան տարածութիւն համարեա թէ թռչում են այժմեան թնդանօթների ուսմբերը և ամենայն հաւանականութեամբ, մօտիկ ապագայում, դեռ դրանից կանցնեն էլ. Քրանտական նորագոյն շէնքի թնդանօթների ուսմբերի արագութիւնն արդէն մի վայրկեանում 900 մետրից անցնում է, իսկ անընդհատ բարենորոգումներն այդ հրանօթների արուեստական կազմութիւնն այն նրբութեան կհասցնեն, որ մի վայրկեանում ուսմբը կարող կլինի 1000 մետր տեղ անցնել, Այժմեան ուսմբերի միջոցով, եթէ իսկապէս հնարաւոր լինէր, կարելի կլինէր նրանց մէջ դրուած նամակներն իննը կամ տասը վայրկեանում 8 հազարամետր տեղ հասցնել։ Մինչև այժմ ձեռք բերուած կատարելագործութեանց համառօտ ակնարկը, ինչպէս նկատում է Journal des Débats թերթի մէջ գիտնական հարցերի ուսումնասիրութեամբ զբաղուող նշանաւոր անձնաւորութիւններից մէկը,

* Ով կամենայ աւելի մանրամասն ծանօթանալ ծաղկահաստութեան գործին և Զէնների գիւտի պատմութեանը, թող կարգա հայերէն՝ 1) Դոկտոր Ֆէշիմայնեանի օգտաւէտ երկը՝ ՊԱՏՈՒԱՍՏԵՄԱՆ ՊԱՍՏՈՒԹԻՒՆ. Պօլիս հրատ. 1884 թ. 2) Տիկին Տրուսիի Կոստանկանի (տիկին Մարգարիտ) «Ջեմմէ» վերնագրով ժողովրդական զբոյրիկը։ Ծան. Թարգմ.

միջոց է աւելիս ըստ սրժանդի գնահատելու այն յառաջդիմական քայլերը, որոնց աստիճանաբար հասել են հրանօթ ղէներերի անխոնջ մշակները։ Այս դարի սկզբներից եկած այդ արագութեան աստիճանը կրկնապատկուել է, եթէ այժմեան արագութիւնը ուսմբերը նախկինների հետ համեմատելու լինինք, կտեսնենք, որ նրանք երկու անգամ արագ են թռչում. Կրուպկի 26 հարիւրերորդական մետրի թնդանօթները յիսուն կիլոգրամմանոց կամ 125 գրուանքանոց ուսմբերը մի վայրկեանում 304 մետր տեղ են ձգում, նոյն այդ գործարանատիրոջ 26 հարիւրերորդական մետրի թնդանօթները 108 կիլոգր. կամ 260 գրուանքանոց ծանրութեան ուսմբերը դեռ աւելի մեծ արագութեամբ են ձգում, այսինքն 860 մետր տեղ, իսկ 24 հ. մետրի թնդանօթները էլի նոյն արագութեամբ 160 կիլոգր. կամ 420 գրուանքանոց ուսմբերը, Շնէյդէր Կանէյն 15 հար. մետրի թնդանօթները մի վայրկեանում 40 կիլոգր. կամ 100 գրուանքանոց ուսմբերն սկզբնական արագութեամբ 800, 840 և 900 մետր տեղ են ձգում, իսկ Ամերիկայի նաւատորմին ունի այնպիսի թնդանօթներ, որոնց ուսմբերը 915 մետր տեղ են ձգում, ուրիշ խօսքով մի վայրկեանում մօտաւորապէս մի հազարամետր։ Աերոյիշխաններից պարզ երևում է, որ մարդկանց ներկայումս այս կամ այն մարմնին տուած արագութեան աստիճանն անցնում է երկրիս իւր առանցքի շուրջը կատարած պտոյտի արագութիւնից, որը, ինչպէս յայտնի է, Հասարակածի մօտ հասնում է 485 մետրի մի վայրկեանում։

* * *

Օձորս։— Աերջին ժամանակներս Բենարէսի շրջակայքում տեղի է ունեցել մի այն աստիճանի սարսափելի անցք, որը նոյն իսկ Հնդկաստանի նման մի երկրում, ուր այդպիսի դէպքեր շատ յաճախ են կրկնում, ցնցող տպաւորութիւն է թողել, Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ հրաշալիքների այդ աշխարհում օձերի խայթելուց աւելի շատ մարդիկ են կորչում, քան գիշատիչ գաղանդների ծանկերից, Հնդկաստանցիներն օձերից աւելի են վախենում քան վաղորներից և կամ ինձերից՝ ուստի և անխնայ կտտորում են, կանոնաւոր կռիւ մղելով նրանց դէմ։ Թունաւոր օձերից ամենից աւելի յայտնին այսպէս կոչուած իտոմայի օձն է, որի խայթը նոյնքան մահաւոր թէ, որքան և Ամերիկայի Մարտինիկայի, Տէյլլինի, Եգիպտոսի և Կապանդիայի իժերինը, Այս օձի կծածն անբուժելի է և անխուսափելի մահ՝ նրա հետեանքը։ Օձորսների պարապմունքը մեծ շահ է բերում իրենց, բայց և անչափ վտանգաւոր է։ Դժուարութիւնը, ի հարկէ, այն չէ, որ տեղն ու